ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1213-Հ «08» 08 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N 930-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվող «Դպրոցական բաժանորդային համակարգ» ծրագրի ընթացակարգը հաստատելու մասին» N 930-Ա հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

8/8/2024

X

ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: MARTIROSYAN ARTUR 4110790255 **ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

/Պարտականությունները կատարող/

Հավելված

Հայաստանի Հանրապետության

ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի 08.08-ի

N 1213 - Ա հրամանի

Հավելված

Հայաստանի Հանրապետության

ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի հուլիսի 27-ի

N 930-Ա հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն ընթացակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի շրջանակում «Դպրոցական բաժանորդային համակարգ ծրագրի իրականացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման բովանդակային և ֆինանսական շրջանակը, շահառուների ներգրավման և մասնակցության պայմանները:

2. Ծրագրի նպատակն է ապահովել դպրոցականների մշակութային հաղորդակցության առաջնային իրավունքը՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ մշակույթի հասանելիության և մատչելիության համար, նպաստել հանրակրթության պետական չափորոշչով սահմանված առանցքային կարողունակությունների ձևավորմանը՝ դպրոցականների ազգային արժեհամակարգի և լայն աշխարհայացքի կայացման, ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին, ժողովրդական արվեստի լավագույն նմուշներին, դասական և ժամանակակից արվեստին հաղորդակցվելու միջոցով:

3. Ծրագրի իրականացման հիմքում կրթության և մշակույթի համադրումն է՝ որպես պետական մշակութային քաղաքականության առաջնահերթություն և Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացիների ձևավորմանը նպաստող արժեքահենք և մշակութահենք նպատակային ծրագրի իրականացում:

4. Ծրագրի իրականացման պատասխանատու մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է (այսուհետ՝ Նախարարություն):

2. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ

5. Ծրագրի շահառուներն են Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների (այսուհետ՝ դպրոցներ) 1-12-րդ դասարանների աշակերտները (այսուհետ՝ աշակերտներ):

6. Ծրագրի իրականացումն ապահովում են պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները՝ թանգարանները, թատրոններն ու համերգային կազմակերպությունները: Ծրագրին կարող են միանալ նաև ոչ պետական թանգարանները, թատրոններն ու համերգային կազմակերպությունները՝ նույն պայմաններով:

7. Ծրագրի մասնակից մշակութային կազմակերպությունների ցանկը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով:

3. ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Ծրագրի յուրաքանչյուր շրջափուլի ժամկետ սահմանվում է 1 (մեկ) տարի:

9. Յուրաքանչյուր շրջափուլի ընթացքում աշակերտները հնարավորություն ունեն այցելելու 2 (երկու) մշակութային կազմակերպություն՝ մեկ թանգարան, մեկ թատրոն կամ համերգային կազմակերպություն:

10. Թանգարանային այցն իրականացվում է հանրակրթության պետական չափորոշչի շրջանակներում՝ առարկայի կամ մի քանի առարկաների ուսումնական ծրագրի շրջանակում թեմատիկ դասի անցկացման նպատակով:

11. Թատերական ներկայացման կամ համերգային միջոցառումների մասնակցությունն իրականացվում է հանրակրթության պետական չափորոշչի շրջանակներում՝ առարկայի կամ մի քանի առարկաների ուսումնական ծրագրին համապատասխան խաղացանկերի և համերգային միջոցառումների շրջանակներում:

12. Թանգարանների թեմատիկ ծրագրերի ցանկը, թատրոնների խաղացանկերը և համերգային կազմակերպությունների համերգային միջոցառումները երաշխավորվում է «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից՝ համապատասխան հանրակրթության պետական չափորոշչի:

13. Կազմակերպության ընտրությունը կատարում են դպրոցները՝ ըստ ուսումնական ծրագրի թեմատիկ և տարիքային համապատասխանության:

4. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Ծրագրի այցելությունները մշակութային կազմակերպություններ ամրագրվում և համաձայնեցվում են նախապես:

15. Յուրաքանչյուր կազմակերպություն ներկայացնում է Ծրագրի համակարգող, որի միջոցով կազմակերպվում է այցելությունը:

16. Այցելությունը թանգարան իրականացվում է հետևյալ սկզբունքով.

1) թանգարանային այցի շրջանակում աշակերտները մասնակցում են թեմատիկ դասի, կրթական ծրագրի կամ ճանաչողական շրջայցի.

2) խումբը պետք է բաղկացած լինի առնվազն 10, իսկ առավելագույնը 15 աշակերտից, բացառությամբ այն դեպքերի, երբ դասարանում աշակերտների թիվը մինչև 20 է.

3) յուրաքանչյուր խմբի համար համար նախատեսվում է մեկ ուղեկցող ուսուցիչ.

4) այցի ամրագրումը թանգարաններ կատարվում է դպրոցի կողմից նախատեսված այցից առնվազն 7 (յոթ) օր առաջ՝ նախորոք թանգարանի հետ համաձայնեցնելով իրականացվող կրթական ծրագիրը.

5) սպասարկվող աշակերտների թիվը համաձայնեցվում է թանգարանի հետ՝ հաշվի առնելով թանգարանի և ծրագրի իրականացման *հնարավորությունները:*

6) դպրոցը կարող է չեղարկել ամրագրումը թանգարան նախատեսվող այցից առնվազն 3 օր առաջ՝ նախապես տեղեկացնելով թանգարանի կողմից ծրագրի համար ներկայացված համակարգողին:

17. Այցելությունը թատրոն իրականացվում է հետևյալ սկզբունքով.

1) թատրոններ այցը կազմակերպվում է դպրոցական ուսումնական ծրագրին համապատասխան խաղացանկերի շրջանակում.

2) թատրոնները համապատասխան խաղացանկերը հրապարակում են 3 (երեք) ամսվա կտրվածքով՝ Ծրագրի՝ տվյալ տարվա շրջափուլի մեկնարկից մեկ ամիս առաջ.

3) յուրաքանչյուր ներկայացման համար թատրոններն առանձնացնում են համապատասխան քանակությամբ նստատեղեր՝ դահլիճի նստատեղերի առնվազն 10 (տաս) տոկոսի չափով.

4) թատրոններ այցի ամրագրումը կատարվում է ներկայացումից առնվազն 20 օր առաջ.

5) թատրոններ այցը կարող է չեղարկվել ներկայացումից առնվազն 3 (երեք) օր առաջ:

18. Այցելությունը համերգային կազմակերպություն իրականացվում է հետևյալ սկզբունքով.

1) համերգային կազմակերպություն այցը կազմակերպվում է դպրոցական ուսումնական ծրագրին համապատասխան խաղացանկերի շրջանակում.

2) համերգային միջոցառումները հրապարակում են 3 (երեք) ամսվա կտրվածքով՝ Ծրագրի՝ տվյալ տարվա շրջափուլի մեկնարկից մեկ ամիս առաջ.

3) յուրաքանչյուր համերգային միջոցառման համար համերգային կազմակերպությունները առանձնացնում են համապատասխան քանակությամբ նստատեղեր՝ դահլիճի նստատեղերի առնվազն 10 (տաս) տոկոսի չափով.

4) համերգային կազմակերպություն այցի ամրագրումը կատարվում է համերգային միջոցառումից առնվազն 20 օր առաջ.

5) այցը համերգային կազմակերպություն կարող է չեղարկվել համերգային միջոցառումից առնվազն 3 (երեք) օր առաջ:

5. ՏՈՄՍԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ, ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

19. Տոմսերի տրամադրումն իրականացվում է Նախարարության կողմից:

20. Աշակերտների թվով տպագրված տոմսերը նախարարության կողմից տրամադրվում են բոլոր վարչատարածքային միավորներին՝ համապատասխան ընդունման-հանձնման ակտերով:

21. Յուրաքանչյուր վարչատարածքային միավոր տոմսերը տրամադրում է իր տարածքում հաշվառված դպրոցներին:

22. Պետական հանրակրթական դպրոցների տնօրենների կողմից տոմսերի վրա դրվում է դպրոցի կնիքը և տրամադրվում աշակերտներին:

23. Տոմսը բաղկացած է 2 (երկու) բաժիններից՝ թանգարան, թատրոն կամ համերգային կազմակերպություն, որի յուրաքանչյուր հատվածում (հետնամասում) պարտադիր է դպրոցի կնիքի առկայությունը:

24. Տոմսի համապատասխան բաժինը հանձնվում է թանգարանին, թատրոնին կամ համերգային կազմակերպությանը՝ հետագա հաշվառման նպատակով:

6. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

25. Ֆինանսավորումը (այսուհետ՝ փոխհատուցում) թանգարաններում կատարվում է իրականացված ուսումնական դասի, կրթական ծրագրի, ընդհանուր ուղեկցությամբ շրջայցերի համար՝ յուրաքանչյուր աշակերտի համար հաշվարկվելով 300 դրամի չափով:

26. Փոխհատուցումը թատրոններում կամ համերգային կազմակերպություններում կատարվում է յուրաքանչյուր աշակերտի համար հաշվարկվելով 1000 դրամի չափով:

27. Աշակերտների տրանսպորտային ծախսերի փոխհատուցման համար անհրաժեշտ է նախարարության հետ համաձայնեցված ծրագրի առկայություն:

28. Ծրագրի շրջանակում ուղեկցող մանկավարժի այցն անվճար է և չի փոխհատուցվում:

29. Մանկավարժի կողմից մշակութային կազմակերպություններ այցելությունը առարկայի թեմատիկ պլանավորման մեջ ներառելու, այցի միջոցով նախագծային աշխատանք իրականացնելու պարագայում տվյալ այցը հաշվարկվում է ուսուցչի աշխատաժամանակի մեջ՝ օրենսդրության համապատասխան:

30. Կազմակերպությունները յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնում են հաշվետվություն:

31. Սահմանված ձևաչափին չհամապատասխանելու դեպքում Նախարարությունը ներկայացված հայտը հետ է վերադարձնում՝ 3-օրյա ժամկետում թերությունները շտկելու և կրկին ներկայացնելու համար:

32. Ներկայացված հաշվետվությունները մեկշաբաթյա ժամկետում ուսումնասիրում և ամփոփվում են Նախարարության պատասխանատու ստորաբաժանման կողմից և Նախարարության գլխավոր քարտուղարին ներկայացվում վերջնական ամփոփ ցուցակները, որոնք սահմանված կարգով ներկայացվում է Նախարարության ֆինանսաբյուջետային վարչությանը՝ Փոխհատուցումն իրականացնելու համար:

7. ԾՐԱԳՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ

33. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգն ապահովում է ծրագրի շահառուների՝ մշակութային կազմակերպություններ մուտքի տոմսերի էլեկտրոնային ամրագրումը:

34. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ուսուցիչների համար հասանելի է դառնում թանգարանների կրթական ծրագրերի կամ շրջայցերի մասին տեղեկատվությունը, թատրոնների խաղացանկը և համերգային կազմակերպությունների համերգային միջոցառումները եռամսյակային կտրվածքով:

35. Ուսուցիչները յուրաքանչյուր դասարանի համար կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ընտրում են թանգարանը՝ կրթական ծրագրի կամ թեմատիկ շրջայցով, թատրոնը՝ ներկայացումով կամ համերգային կազմակերպությունը՝ համերգային միջոցառումով, յուրաքանչյուր ուսումնական տարի մինչև սեպտեմբերի երկրորդ շաբաթը:

36. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ինքնաշխատ եղանակով ձևավորվում է յուրաքանչյուր թանգարանը (կրթական ծրագրի կամ թեմատիկ շրջայցի) թատրոնը (ներկայացման) և համերգային կազմակերպությունը (համերգային միջոցառման) ընտրած դպրոցների և դասարանների ցանկը:

37. Նշված ցանկերը տրամադրվում են մշակութային կազմակերպությունների համակարգողներին:

38. Մշակութային կազմակերպությունների համակարգողները, ելնելով դիմած դպրոցների և դասարանների թվից, տեղաբաշխում են այցելությունները տվյալ ամսվա, եռամսյակի կամ կիսամյակի ընթացքում՝ յուրաքանչյուր դպրոցի և դասարանի հետ համաձայնեցնելով այցելության օրն ու ժամը:

39. Հայտարարված ցանկից շեղումները կատարվում են նախարարության համաձայնությամբ և մշակութային կազմակերպությունների համաձայնության դեպքում:

8. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

40. Ծրագիրը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցներում սովորող 1-12-րդ դասարանների աշակերտների, անկախ սոցիալական կարգավիճակից, բնակության վայրից և մշակութային հաստատության հասանելիությունից, մասնակցել իր համայնքի կամ Հայաստանի Հանրապետության ցանկացած այլ բնակավայրի մշակութային միջոցառմանը:

41. Ծրագիրը երաշխավորում է դպրոցականների մշակութային կրթության իրավունքի իրացման նվազագույն հնարավորությունը՝ միաժամանակ մշակութային հաստատություններին ընձեռելով նոր այցելուներ ունենալու և մշակութային այլ կազմակերպությունների հետ հավասար պայմաններում մրցակցելու հնարավորություն: